

Օպտիմալ հարկային բեռի եվ հարկային եկամուտների վրա ազդող գործոնների գնահատումը ՀՀ-ում¹

Բեջանյան Հայկ Ի.

տ. գ. թ., բանկային գործի և սպահովագրության ամբիոնի դասախոս,
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (Երևան, ՀՀ)

<https://orcid.org/0000-0001-5784-0607>

bejanyan033@gmail.com

Աղաբեկյան Էդգար Վ.

տ. գ. թ., ֆինանսների ամբիոնի դոցենտ,
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (Երևան, ՀՀ)

<https://orcid.org/0000-0002-4194-5495>

eaghabekeyan@gmail.com

Լևոնյան Սուրեն Ռ.

տ. գ. թ., տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի դասախոս,
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (Երևան, ՀՀ)

<https://orcid.org/0000-0003-0018-3022>

levonyansur@gmail.com

Դավիթյան Կամո Ա.

տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի ասպիրանտ
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (Երևան, ՀՀ)

<https://orcid.org/0000-0001-8063-5548>

davtyankamo1997@gmail.com

Ստեփանյան Ժորա Վ.

միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի ասպիրանտ,
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (Երևան, ՀՀ)

<https://orcid.org/0009-0000-2144-1903>

zhora.stepanyan.asue@gmail.com

ՀՏԳ՝ 336.1; EDN: QQIZKD; JEL: H2, H21;

DOI: 10.58587/18292437-2024.2-157

Հանգուցաբառեր՝ Հարկային եկամուտներ, օպտիմալ հարկային բեռ, ՀՆԱ-ի ան

Оценка факторов, влияющих на оптимальную налоговую нагрузку и налоговые доходы в РА

Беджанян Айк И.

к.э.н., преподаватель кафедры банковского дела и страхования,
Армянский государственный экономический университет (Ереван, РА)

Агабекян Эдгар В.

к.э.н., доцент кафедры финансов,
Армянский государственный экономический университет (Ереван, РА)

Левонян Сурен Р.

к.э.н., преподаватель кафедры экономико-математических методов,
Армянский государственный экономический университет (Ереван, РА)

Давтян Камо А.

аспирант кафедры экономико-математических методов
Армянский государственный экономический университет (Ереван, РА)

Степанян Жора В.

аспирант кафедры международных экономических отношений,
Армянский государственный экономический университет (Ереван, РА)

¹ Հողվածը տպագրվում է ՀՊՏՀ ԱՄԲԵՐԴ հետազոտական կենտրոնի կողմից հայտարարված «ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՏԱՅԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՓՈԽԱԳԱՐՁ ԿԱՊԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ» թեմայով դրամաշնորհային մրցույթի արդյունքում կատարված հետազոտական աշխատանքների շրջանակներում:

Аннотация. Цель статьи – выявить факторы, влияющие на оптимальную налоговую нагрузку и налоговые поступления РА, и оценить их влияние. Задачи работы – выявить круг факторов, влияющих на оптимальную налоговую нагрузку и налоговые поступления, оценить их влияние и механизмы передачи с помощью эконометрических моделей. Анализ в работе проводился с использованием статистических и эконометрических методов, версии кривой Лаффера в модификации Балацкокого.

В результате исследования выяснилось, что результаты оценки показывают, что экономический рост РА при прочих равных условиях достигнет своего максимального значения при налоговой нагрузке в 20,9-21,9 %, что мы считаем оптимальным диапазоном налоговой нагрузки. Расходы правительства на конечное потребление не обеспечивают достаточный уровень экономического роста или продолжение высоких темпов роста. Оценка влияния показателей, определяющих рост ВВП, на налоговые поступления показывает, что показатели, определяющие рост ВВП, в целом также оказывают существенное влияние на налоговые поступления.

Ключевые слова: Налоговые поступления, оптимальная налоговая нагрузка, рост ВВП

Assessment of Factors Affecting Optimal Tax Burden and Tax Revenues in RA

Bejanyan Hayk I.

*PhD, Lecturer, Chair of the Banking and Insurance,
Armenian State University of Economics (Yerevan, RA)*

Aghabekyan Edgar V.

*PhD, Associate professor, Chair of the Finance,
Armenian State University of Economics (Yerevan, RA)*

Levonyan Suren R.

*PhD, Lecturer, Chair of the Economic and Mathematical Methods,
Armenian State University of Economics (Yerevan, RA)*

Davtyan Kamo A.

*PhD student, Chair of the Economic and Mathematical Methods,
Armenian State University of Economics (Yerevan, RA)*

Stepanyan Zhora V.

*PhD student, Chair of the International Economic Relations,
Armenian State University of Economics (Yerevan, RA)*

Abstract. The purpose of the article is to identify the factors affecting the optimal tax burden and tax revenues of RA and evaluate their impact. The tasks of the work are to identify the range of factors affecting the optimal tax burden and tax revenues, to evaluate their impact and transmission mechanisms using econometric models. The analyzes in the work were carried out using statistical and econometric methods, the version of the Laffer curve, modified by Balatsky. As a result of the study, it was revealed that the evaluation results show that RA economic growth, other things being equal, will reach its maximum value when the tax burden is 20.9-21.9 %, which we considered as the optimal tax burden range. The government's final consumption expenditure does not ensure a sufficient level of economic growth or a continuation of high growth. The assessment of the impact of indicators determining GDP growth on tax revenues shows that the indicators determining GDP growth, in general, also have a significant impact on tax revenues.


Keywords: Tax revenues, optimal tax burden, GDP growth

Պետության եկամտային քաղաքականությունն ու տնտեսական իրավիճակը սերտորեն փոխկապակցված են: Եկամտային քաղաքականությունը ոչ միայն ապահովում է պետական բյուջեի եկամուտների ձևավորումն ու դրանց ծախսումը, այլ նաև ազդում է մակրոտնտեսական վիճակի վրա, որն էլ հետագայում կապով ապահովում է հարկային համակարգի անխափան գործողությունն ու շարունակական բարելավման գործընթացները: Սա է պատճառը, որ հարկային համակարգի և Համախառն ներքին արդյունքի փոխազդեցությունները գիտական շրջանակներում ամենաշատ ու սուր քննարկումներ առաջացրած ոլորտն են: Օրինակ՝ Ռ. Ռիդը ուսումնասիրելով ԱՄՆ-ում հարկման և պետական եկամուտների աճի միջև կապը՝ գտնում է, որ ընդհանուր ծախսերը ֆինանսավորելու համար օգտագործվող հարկերը կապ-

ված են եկամտի աճի վրա զգալի բացասական ազդեցությունների հետ [7]: Պալերմոյի համալսարանի կողմից իրականացված հետազոտությունում ուսումնասիրվում է հարկային փոփոխությունների ազդեցությունը տնտեսական աճի վրա: Արդյունքները ցույց են տալիս, որ մեկ շնչին ընկնող իրական ՀՆԱ-ի վրա հարկերի աճի ազդեցությունը բացասական է և կայուն [6]: Ջ.Արնոլդի և մյուսների հետազոտությունը, որը վերաբերում է հարկային քաղաքականության և տնտեսական վերականգնման ու աճի կապերին ներկայացրել է էմպիրիկ արդյունքներ, որոնք հաստատում են այն տեսական համոզմունքները, որ տնտեսական աճը կարող է ավելանալ՝ հարկային բազան աստիճանաբար տեղափոխելով դեպի սպառումը և անշարժ գույքը (հատկապես բնակելի գույք): Այն նաև պնդում է, որ աճը կարող է ընդլայնվել նաև անհատական

հարկերի միջոցով [4]: Հետազոտողների մեկ այլ խումբ ենթադրում է, որ հարկաբյուջեային քաղաքականության միջոցով կառավարությունը կարող է ազդել բիզնեսի և անհատների վրա՝ նրանց վարքագիծը կարգավորելու նպատակով [5]: Հայաստանյան հեղինակներից ևս անդրադարձ են կատարել հարկային բեռի և տնտեսական աճի փոխազդեցության հիմնախնդիրներին: Գ. Կիրակոսյանի Հայաստանի Հանրապետությունում ՀՆԱ-ի կառուցվածքի բարելավման և հարկային բեռի բաշխման հիմնախնդիրներին վերաբերվող հոդվածում [1] ուսումնասիրվում է ՀՀ-ում համախառն ներքին արդյունքի ճյուղային

կառուցվածքի փոփոխությունները, տնտեսական աճի դինամիկան և այդ գործոնների ազդեցությունը հարկեր/ՀՆԱ հարաբերակցության վրա: Կ. Սարոյանի Հարկային բեռի կառավարման և տնտեսական աճի փոխկապակցվածության կառուցակարգերը Հայաստանի Հանրապետությունում թեկնածուական ատենախոսությունում [2] ուսումնասիրության է ենթարկվել ՀՀ հարկային համակարգը, դրա հիմնական առանձնահատկությունները, ինչպես նաև դրա դերը հարկային բեռի ձևավորման և կառավարման գործում:



Պատկեր 1. ՀՀ-ում ՀՆԱ աճի և Հարկային բեռի դինամիկան ըստ տարիների (2003-2022 տարեկան)

ՀՀ -ում ՀՆԱ աճը մշտապես ենթակա է արտաքին շուկերի ազդեցության, ինչի հետևանքով ամենամեծ անկումները դիտարկվել են համաշխարհային տնտեսությունում առաջացած ցնցումների կամ ճգնաժամերի ազդեցությամբ: Պատմականորեն հարկային բեռի ամենացածր մակարդակը դիտարկվում է 2000-ական թվականների սկզբում, երբ տնտեսական աճի ամենաբարձր մակարդակ է ապահովվել: Սակայն տնտեսական հետագա զարգացումները ցույց են տալիս, որ տնտեսական աճի կառուցվածքը և տնտեսության դիվերսիֆիկացման աստիճանն ավելի էական են աճի կայունությունն ապահովելու գործում: Հետագա ժամանակաշրջանում դիտարկվում է հարկային բեռի շարունակական աճի միտում:

Հարկային բեռի օպտիմալ մակարդակի բացահայտումը կարող է ապահովել հարկային համակարգի բարեփոխման հիմնական ուղղությունների բացահայտումը և տնտեսական աճի կայունությանը միտված եկամտային քաղաքականության մշակմանը: Հետազոտության նպատակն է գտնել ՀՀ հարկային բեռի օպտիմալ մակարդակը, այսինքն՝ ՀՀ հարկային բեռի այն

մակարդակը, որն ապահովում է հարկային եկամուտների և համախառն արտադրության ծավալի այնպիսի լավագույն համադրություն, որի դեպքում հարկային բեռի մակարդակի սահմանային կամ լրացուցիչ տոկոսային աճն այլևս կհանգեցնի բացասական տնտեսական աճի: Այս նպատակին հասնելու համար օգտագործվել է Լաֆֆերի կորի՝ Բալացկիի կողմից մոդիֆիկացված տարբերակը [3, էջ 35]:

Գնահատվել է հետևյալ մոդելը:

$$GDP_GR_t = \beta_0 + \beta_1 * TAX_BURDEN_t + \beta_2 * TAX_BURDEN_t^2 + \beta_3 * X_t + \varepsilon_t, t = 2008Q1, 2023Q2 \quad (1)$$

Որտեղ GDP_GR_t -ն ՀՀ տնտեսական աճի ցուցանիշն է, TAX_BURDEN_t -ն ՀՀ հարկային բեռի ցուցանիշն է, $TAX_BURDEN_t^2$ -ն հարկային բեռի քառակուսին է, որն արտացոլում է վերջինիս և տնտեսական աճի միջև ոչ գծային կապի հնարավորությունը: Եթե գնահատումների արդյունքները ցույց տան, որ ցուցանիշների միջև կապը բնութագրվում է շրջված U-աձև կորի միջոցով (այսինքն $\beta_1 > 0$ և $\beta_2 < 0$),

ապա դա կնշանակի, որ որոշակի կետից այն կողմ հարկային բեռի բարձրացումն ունենում է նպատակին հակառակ արդյունք՝ հարկային բեռի մեծացմանը զուգահեռ երկրում համախառն արտադրության ծավալները նվազում են: Վերոնշյալ կետը կհանդիսանա հարկային բեռի այն օպտիմալ մեծությունը, որը մաքսիմալացնում է ՀՀ-ում տնտեսական աճը: Ծրջման կետը գնահատվում է հավասարման առաջին կարգի մասնակի ածանցյալի միջոցով.

$$\frac{\partial GDP_GR}{\partial TAX_BURDEN} = \beta_1 + 2 * \beta_2 TAX_BURDEN$$

:

(2)

Հարկային բեռի օպտիմալ մակարդակը, հիմնվելով վերոնշյալ հավասարումների վրա, ներկայացվում է հետևյալ տեսքով՝

$$GDP_GR = \frac{-\beta_1}{2\beta_2}$$

:

(3)

(1)-հավասարման մեջ X-ը վերահսկիչ փոփոխականների վեկտորն է, որը ներմուծվել է գնահատումների կայունությունը բարելավելու, ինչպես նաև տնտեսական աճի վրա այլ մակրոտնտեսական գործոնների ազդեցությունները գնահատելու համար: Որպես վերահսկիչ փոփո-

խականներ ընտրվել են տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերը, կառավարության վերջնական սպառման ծախսերը, դրամական փոխանցումներ դեպի ՀՀ, ՀՀ արտահանում, ՀՀ համախառն խնայողությունները: Մոդելում ներառվել են վերոնշյալ ցուցանիշների 2008-2023 թվականների եռամսյակային տվյալները՝ կազմելով ընդհանուր 62 դիտարկում:

Աղյուսակ 1-ում ներկայացված է վերոնշյալ ցուցանիշների միջև զույգ առ զույգ փոխկախվածությունները: Բացառելու համար գնահատվող մոդելներում բացատրող փոփոխականների միջև մուլտիկոլինեարության երևույթը, ըստ վերահսկող փոփոխականների առանձնացվել և գնահատվել են 3 մոդելներ, որտեղ ներառված վերահսկող փոփոխականները միմյանց միջև չունեն կոռելյացիայի նշանակալի կամ մեծ գործակից: Մոդելի գնահատման համար նախ պարզվել են մոդելում ներառված բոլոր փոփոխականների ինտեգրման կարգերը, ինչի համար կիրառվել է միավոր արմատի (ADF) թեստն ըստ Ակայկեի չափանիշի: Ներառված բոլոր փոփոխականները ստացիոնար են, ուստի մոդել են ներմուծվել առանց փոփոխության:

Աղյուսակ 1. Փոփոխականների միջև զույգ առ զույգ կոռելյացիաների մատրիցը

	1	2	3	4	5	6	7
1 <i>GDP growth</i>	1						
2 <i>Households cons</i>	0.65*	1					
3 <i>Gov final cons</i>	0.15	-0.03	1				
4 <i>Remittances</i>	0.63*	0.634*	0.058	1			
5 <i>Exports</i>	0.382*	0.407*	-0.122	0.345*	1		
6 <i>Gross savings</i>	0.543*	0.283*	0.008	0.426*	0.13	1	
7 <i>Tax burden</i>	-0.383*	-0.216*	-0.374*	-0.31*	0.24*	-0.4*	1

* $p < 0.1$

Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկներ

Կառուցված 3 մոդելների գնահատման արդյունքները ներկայացված են աղյուսակ 3-ում: Ներկայացված են նաև մոդելների մնացորդներում ավտոկոռելյացիայի և հոմոսկեդաստիկության երևույթների առկայությունը ստուգող թեստերի արդյունքները: Ինչպես ցույց են տալիս կատարված թեստերի արդյունքները՝ գնահատված բոլոր մոդելների մնացորդները հոմոսկեդաստիկ են և զուրկ են ավտոկոռելյացիայից: Ինչպես երևում է ստացված գործակիցներից՝ հարկային բեռի ազդեցությունը բոլոր 3 մոդելներում ունի նշանակալի ազդեցություն, իսկ ազդեցության գործակիցների նշանները համա-

պատասխանում են ակնկալվող արդյունքներին ($\beta_1 > 0$ և $\beta_2 < 0$): Հարկային բեռի ավելացումը մեկ տոկոսային կետով հանգեցնում է տնտեսական աճի 4.67-5.09 տոկոսային կետ աճի, սակայն ազդեցությունը դառնում է բացասական, երբ հարկային բեռը գերազանցում է 20.9-21.9 տոկոսը: Այսինքն՝ հաշվի առնելով գնահատման արդյունքները, ՀՀ տնտեսական աճը, այլ հավասար պայմաններում, կրճատվի իր ընդհանուր առավելագույն արժեքը, երբ հարկային բեռը կազմի 20.9-21.9 տոկոս:

Աղյուսակ 2. Մոդելների գնահատման էմպիրիկ արդյունքները և մնացորդների թեստերը

	1	2	3
GDP growth(-1)	0.438 ^{***} (4.581)	0.525 ^{***} (5.65)	0.465 ^{***} (5.184)
<i>Tax burden</i>	5.09 ^{***} (5.45)	4.667 ^{***} (4.9)	4.896 ^{***} (5.6)
<i>Tax burden</i> ²	-11.6 ^{***} (-4.13)	-11.16 ^{***} (-3.795)	-11.235 ^{***} (-4.195)
Households cons	0.361 ^{***} (4.912)	-	
Gov final cons	-	0.013 (0.206)	-
Remittances	-	0.142 ^{***} (4.4)	-
Exports	-	-	0.102 ^{***} (4.52)
Gross savings	-	-	0.06 ^{**} (4.52)
Constant	-	-	-
Obs.	61	61	61
<i>R</i> ²	0.59	0.57	0.63
Turning Point	21.93%	20.91%	21.78%
Serial Correlation LM Test			
F-stat. (prob.)	1.061 (0.31)	1.615 (0.21)	0.34 (0.54)
Heteroskedasticity Test (BPG)			
Obs*R-sq. (prob. χ^2)	0.053 (0.99)	0.73 (0.57)	1.22 (0.3)

* $p < 0.1$, ** $p < 0.05$, *** $p < 0.01$: Փակագծերում ներկայացված են t վիճականու արժեքները Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկներ

Գնահատման նման արդյունքը ցույց է տալիս, որ տնտեսական աճի առավելագույն մակարդակ ապահովող հարկային բեռի օպտիմալ մակարդակը ցածր է հարկային բեռի փաստացի ներկա մակարդակից: Պատճառը նախ այն հանգամանքն է, որ պատմականորեն տնտեսական աճի առավելագույն մակարդակ ապահովվել է հարկային բեռի ավելի ցածր մակարդակի պայմաններում՝ օրինակ 2000-ական թվականների սկզբում: Մյուս կողմից էլ նման պատկերը կարելի է մեկնաբանել հավաքագրված հարկային եկամուտների օգտագործման արդյունավետության ցածր մակարդակով: Պետական ծախսերի կամ ներդրումների իրա-

կանացումը հիմնականում ընթացիկ սպառում ապահովող ոլորտներում, կապիտալ ներդրումների իրականացման ցածր մակարդակը չեն ապահովում տնտեսական աճի բավարար ստիճան կամ բարձր աճի շարունակականության ապահովում: Նշենք նաև, որ տարեկան ցուցանիշների հիման վրա օպտիմալ հարկային բեռի որոշման դեպքում օպտիմալ մակարդակը եռամսյակային ցուցանիշների հիման վրա կառուցված մոդելից ավելի պակաս է՝ 17,26-18,06 տոկոս (Աղյուսակ 3): Եռամսյակային ցուցանիշների հիման վրա հաշվարկի պարագայում դրանց ընթացիկ տատանողականությունը մեղմում է պատկերը:

Աղյուսակ 3. Տարեկան շարժերով գնահատման արդյունքները (not actual)

	1	2	3	4	5	6	7	8
	10.62*** (6.802)	12.889** (17.938)	12.585** (11.934)	11.696** (17.986)	11.638** (18.508)	12.26*** (15.38)	12.604** (14.036)	12.746** (11.737)
<i>Tax burden</i> ²	-28.54*** (-4.365)	-37.77*** (-11.013)	-36.4*** (-8.887)	-32.01*** (-10.49)	-31.86*** (-10.835)	-34.58*** (-9.221)	-36.08*** (-8.651)	-36.71*** (-7.262)
<i>Gross savings</i>	0.509* (-2.244)	-	-	-	-	-	-	-
<i>Exports</i>	-	0.132** (2.479)	-	-	-	-	-	-
<i>Gov final cons</i>	-	-	0.17 (0.135)	-	-	-	-	-
<i>Remittances</i>	-	-	-	0.224*** (3.822)	-	-	-	-
<i>Households cons</i>	-	-	-	-	0.599*** (4.102)	-	-	-
<i>Gross savings</i>	-	-	-	-	-	0.084** (1.856)	-	-
Δ Employment in serv	-	-	-	-	-	-	0.5 (0.231)	-
Δ Population growth	-	-	-	-	-	-	-	5.294 (0.14)
<i>Constant</i>	-	-	-	-	-	-	-	-
Obs.	20	20	20	20	20	20	20	20
Turning Point	18.06%	17.06%	17.28%	18.26%	18.26%	17.72%	17.46%	17.36%

Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկներ

Վերջնական սպառման ծախսերի մեկ տոկոսային կետ անը հանգեցնում է տնտեսական անի ավելացմանը 0.361 տոկոսային կետով: Կառավարության վերջնական սպառման ծախսերի անի ազդեցությունը, ըստ գնահատման արդյունքների, չունի նշանակալի ազդեցություն չ-ում տնտեսական անի վրա: Մինչդեռ ոչ պետական հատվածի կողմից կատարված ծախսերի իրականացումն առավել արդյունավետ է տնտեսական անի ապահովման տեսանկյունից: Դրամական փոխանցումների և արտահանման աներն ունեն դրական ազդեցություն՝ համապատասխանաբար 0.14 և 0.1 ազդեցության գործակիցներով, իսկ համախառն խնայողությունների մեկ տոկոսային կետ անը բերում է տնտեսական անի 0.06 տոկոսային կետ անին: Դրամական փոխանցումների պարագան կարող ենք բացատրել չ-ում տնտեսական անի վրա ազդող արտաքին գործոնների առավել ուժգնությամբ և

դրանց փոխանցումային մեխանիզմ հանդիսացող դրամական փոխանցումների կարևորությամբ: Այն հանգամանքը, որ բնակչության կողմից սպառման ապահովման համար կարևոր դեր ունեն ստացված դրամական տրանսֆերտները, այն դրանց դարձնում է տնտեսական անի ապահովող նշանակալի գործոն: Արտահանման անը նույնպես դեպի տնտեսություն հավելյալ դրամական հոսքեր է ապահովում՝ մեծացնելով հետագա ծախսերի ու ներդրումների իրականացման հնարավորությունները: Խնայողությունների համեմատաբար փոքր բայց նշանակալի ազդեցությունը կարող ենք պայմանավորել կապիտալի շուկայի գործիքակազմի թերզարգացվածությամբ: Դրանց հետագա զարգացումն առավել արդյունավետ կդարձնի խնայողությունների կառավարման և դրանք տնտեսության իրական հատված ուղղելու ու տնտեսական անի ապահովելու գործընթացը:

Աղյուսակ 4. Մոդելների գնահատման էնսիդիկ արդյունքները և մնացորդների թեստերը

	1	2	3
Tax revenue(-1)	0.526*** (9.72)	0.657*** (7.827)	0.67*** (9.02)
Households cons	0.688*** (7.017)	-	
Gov final cons	-0.042 (-0.51)	0.006 (0.55)	-
Remittances	-	0.231*** (3.5)	-
Exports	-	-	0.12*** (2.736)
Gross savings	-	-	0.07 (1.47)
Constant	-	-	-
Obs.	62	62	62
R²	0.64	0.56	0.56
Serial Correlation LM Test			
F-stat. (prob.)	1.59 (0.21)	0.022 (0.97)	0.056 (0.54)
Heteroskedasticity Test (BPG)			
Obs*R-sq. (prob. χ^2)	1.92 (0.13)	0.82 (0.48)	1.22 (0.3)

* $p < 0.1$, ** $p < 0.05$, *** $p < 0.01$: Փակագծերում ներկայացված են t վիճականու արժեքները Աղբյուրը՝ հեղինակների հաշվարկներ

Հաջորդիվ, աղյուսակ 4-ում ներկայացված է ՀՆԱ անը պայմանավորող ցուցանիշների ազդեցության գնահատումը հարկային եկամուտների վրա: Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ ՀՆԱ անը պայմանավորող ցուցանիշներն, ընդհանուր առմամբ, ունեն նաև նշանակալի ազդեցություն հարկային եկամուտների վրա: Մասնավորապես, տնային տնտեսությունների սպառման ծախսերի մեկ տոկոսային կետ անը հանգեցնում է հարկային եկամուտների աճին՝ 0.526 տոկոսային կետով: Վերջինս կարող ենք պայմանավորել հարկային եկամուտների մեջ անուղղակի հարկերի զգալի կշռով: Անուղղակի հարկերը մի կողմից պետական եկամուտների աճ են ապահովում, սակայն ըստ էության նվազեցնում են մասնավոր հատվածի կողմից սպառման կամ հետագա ծախսերի իրականացման հնարավորությունները: Մինչդեռ մենք ցույց էինք տվել, որ տնտեսական աճի վրա մասնավոր հատվածի կողմից կատարվող ծախսերը պետական ծախսերի համեմատ ավելի նշանակալի ազդեցություն են ապահովում: Դրանական փոխանցումների և արտահանման աճերն ունեն դրական ազդեցություն՝ համապատասխանաբար 0.231 և 0.12 ազդեցության

գործակիցներով: Հետևաբար կարող ենք նշել, որ դեպի տնտեսություն հոսքերն ի տարբերություն պետական ծախսերի հավելյալ սպառման ծախսեր, ներդրումներ են ապահովում, իսկ վերջիններս էլ ազդեցություն ունեն հարկային եկամուտների վրա իրենց հետ կապված անուղղակի և ուղղակի հարկերի պատճառով: Համախառն խնայողությունների և կառավարության վերջնական սպառման ծախսերի աճերը չունեն նշանակալի ազդեցություն հարկային եկամուտների վրա: Այս առումով հատկանշական է պետական ծախսերի պարագան, ինչը հիմնավորում է մեր կողմից առաջ քաշված թեզը, որ պետական ծախսերը որոշակի մակարդակով անարդյունավետ են՝ կապիտալ ներդրումներին չուղղվելու, առավելապես ընթացիկ սպառման և աշխատավարձերին ուղղվելու պարագայում, և նույնիսկ էական դեր չեն կատարում հետագայում հարկերի տեսքով պետական եկամուտների աճի գործում:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Կիրակոսյան, Գևորգ** ՀՆԱ-ի կառուցվածքի բարելավման և հարկային բեռի բաշխման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում // «Բանբեր Երևանի համալսարանի». Տնտեսագիտություն, 2021 N1, http://www.old.ysu.am/files/05G_Kirakosyan.pdf
2. **Սարոյան, Կարեն** Հարկային բեռի կառավարման և տնտեսական աճի փոխկապվածության կառուցակարգերը Հայաստանի Հանրապետությունում ատենախոսություն, Ը.00.02- «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար: - Երևան, 2022
3. **Балацкий Е. В.** Эффективности фискальной политики государства. 2000, с. 35 (Эффективность фискальной политики государства – тема научной статьи по экономике и бизнесу читайте бесплатно текст научно-исследовательской работы в электронной библиотеке КиберЛенинка (cyberleninka.ru) ար 30.10.2022 թ.:
4. **Arnold, J. M., Brys, B., Heady, C., Johansson, Å., Schwellnus, C., & Vartia, L.** (2011). Tax Policy for Economic Recovery and Growth: The Economic Journal, 121(550), F59–F80. doi:10.1111/j.1468-0297.2010.02415.x
5. **Balasoiu, Narciz, Iulian Chifu, and Marian Oancea.** 2023. "Impact of Direct Taxation on Economic Growth: Empirical Evidence Based on Panel Data Regression Analysis at the Level of Eu Countries" Sustainability 15, no. 9: 7146. <https://doi.org/10.3390/su15097146>
6. **Daive Furceri. Georgios Karras.** Tax changes and economic growth: Empirical evidence for a panel of OECD countries, OECD, University of Palermo, 2008. <https://u.to/KkmKIA>
7. **Reed R.** The robust relationship between taxes and U.S. state income growth, National Tax Journal, Vol. 61, No. 1, 2008

Տճանա/Հանձնվել է՝ 29.03.2024

Քեցենզիրովանա/Գրախոսվել է՝ 05.04.2024

Քրինյա/Ընդունվել է՝ 09.04.2024